

Ի՞նչ Պետք Է Իմանա՞ն Կենդանի Ունեցող Անձինք Կապիկի Ծաղիկ Հիվանդության Մասին

1. Ի՞նչ Է Կապիկի Ծաղիկ հիվանդությունը

Կապիկի Ծաղիկը հազվադեպ հանդիպող վիրուսային հիվանդություն է, որն առաջանում է կապիկի Ծաղիկ վիրուսից: Վիրուսը կենդանուց մարդուն կամ հակառակը (zoonotic) փոխանցվող վիրուս է և կարող է փոխանցվել մարդկանց և կենդանիների միջև, ինչպես նաև մի կենդանուց մյուսին: Մարդկանց մոտ կապիկի Ծաղիկը առաջացնում է ջերմություն, գլխացավ, մեջքի ցավ և ավշային հանգույցների այտուց, որին հաջորդում է բշտաման ցան: Այս պահին գոյություն ունեցող սահմանափակ տեղեկատվության հիման վրա հանրության համար վտանգը թվում է ցածր: Մարդիկ, ովքեր կարող են ունենալ կապիկի Ծաղիկի ախտանիշներ, ինչպես օրինակ բնորոշ ցան կամ վնասվածքներ, պետք է դիմեն իրենց բուժաշխատողին՝ վտանգի գնահատման համար:



2. Ինչպե՞ս է տարածվում կապիկի Ծաղիկ հիվանդությունը

Կապիկի Ծաղիկը փոխանցվում է վարակված անձի, կենդանու կամ վիրուսով վարակված նյութերի հետ ուղղակի և անուղղակի շփման միջոցով: Վիրուսը կարող է ներթափանցել օրգանիզմ աչքերի, քթի, բերանի, վնասված մաշկի կամ շնչուղիների միջոցով: Վիրուսը մարդկանց միջև փոխանցվում է շնչառական կաթիլների միջոցով (օրինակ՝ երկարատև դեմ առ դեմ շփում), մարմնի հեղուկների կամ մաշկի վնասվածքների հետ ուղղակի շփման և աղտոտված նյութերի (հագուստ, սպիտակեղեն) հետ անուղղակի շփման միջոցով: Վիրուսը կարող է կենդանիներից փոխանցվել մարդկանց խայթոցների կամ քերծվածքների, վարակված կենդանիների հյուսվածքներ ուտելու, մարմնի հեղուկների կամ մաշկի վնասվածքների հետ ուղղակի շփման և աղտոտված նյութերի հետ անուղղակի շփման միջոցով, ինչպիսիք են անկողնային պարագաները:

3. Կարո՞ղ է ձեր ընտանի կենդանին վարակվել կապիկի Ծաղիկ հիվանդությամբ

Հայտնի է, որ կապիկները և մարդակերպ կապիկները (ape), մի շարք կրծողներ (ներառյալ առնետները, մկները, սկյուռիկները և տափաստանային շները) և նապաստակները զգայուն են վարակի նկատմամբ: Կենդանիների տեսակների ամբողջական շրջանակը, որոնք կարող են վարակվել կապիկի Ծաղիկ վիրուսով, դեռևս հայտնի չէ. այլ վայրի և ընտանի կենդանիներ (օրինակ՝ շները և կատուները) կարող են զգայուն լինել այս վիրուսի նկատմամբ: Բացի այդ, ձեր ընտանի կենդանին պետք է շփվի կապիկի Ծաղիկով հիվանդ մարդու կամ կենդանու հետ՝ հիվանդությունը ձեռք բերելու համար:

4. Ի՞նչ ախտանիշներ պետք է փնտրել ընտանի կենդանիների մոտ

Կապիկի Ծաղիկի ախտանիշները կենդանիների տարբեր տեսակների համար տարբեր են: Ախտանիշները կարող են ներառել թմրածություն, ախորժակի նվազում, ջերմություն, հագ, աչքերի կեղևակալում կամ պոտորություն, ընդլայնված ավշային հանգույցներից առաջացած առջևի և հետևի վերջույթների այտուցվածություն և անհարթ կամ բշտաման ցան:

5. Ի՞նչ անել, եթե ձեր ընտանի կենդանին շփվել է կապիկի Ծաղիկ վարակի հետ

Եթե ձեր ընտանի կենդանին հավանաբար շփվել է կապիկի Ծաղիկի հետ, սակայն հիվանդության ախտանիշներ չի ցուցաբերում, հնարավոր է, որ անհրաժեշտ լինի վերահսկել հիվանդության նշանները: Եթե կասկածում եք, որ ձեր ընտանի կենդանին շփվել է կապիկի Ծաղիկով հիվանդ մարդու կամ կենդանու հետ, դիմեք Հանրային Առողջության Վարչության Անասնաբուժական Բաժին՝ քննարկելու վտանգի և անվտանգության միջոցառումները:

Կարևոր Տեղեկություններ

Կապիկի Ծաղիկը կենդանուց մարդուն կամ հակառակը (zoonotic) փոխանցվող հիվանդություն է, որը կարող է փոխանցվել մարդկանց և կենդանիների միջև:

Այս պահին հանրության և կենդանիների համար վտանգը ցածր է:

Եթե ձեր ընտանի կենդանին շփվել է կապիկի Ծաղիկով հիվանդ մարդու կամ կենդանու հետ, դիմեք Հանրային Առողջության Վարչության Անասնաբուժական Բաժին՝ 213-288-7060 հեռախոսահամարով կամ այցելեք՝ vet@ph.lacounty.gov:

Ի՞նչ Պետք Է Իմանա՞ն Կենդանի Ունեցող Անձինք Կապիկի Ծաղիկ Հիվանդության Մասին

6. Ի՞նչ անել, եթե կարծում եք, որ ձեր ընտանի կենդանին վարակվել է կապիկի ծաղիկով

Այս պահին կենդանիների համար վտանգը ցածր է: Այնուամենայնիվ, եթե ձեր ընտանի կենդանին շփվել է հիվանդ կենդանու կամ մարդու հետ և նրա մոտ դրսևորվում են կապիկի ծաղիկ հիվանդության ախտանիշներ, խնդրում ենք հետևել հետևյալ հրահանգներին:

ՊԵՏՔ Է՝

- Կապ հաստատել Հանրային Առողջության Վարչության Անասնաբուժական Բաժնի հետ (213-288-7060; vet@ph.lacounty.gov):
- Ամփոջապես առանձնացնել կենդանուն մարդկանցից և այլ կենդանիներից (մեկուսացնել առանձին սենյակում):
- Լվանալ ձեր ձեռքերը օճառով և ջրով և/կամ ալկոհոլի հիմքով ձեռքերի ախտահանիչով կենդանու և ցանկացած առարկայի հետ շփումից հետո, որը կարող է աղտոտված լինել վիրուսով:
- Շփվելուց կամ օգտագործելուց հետո մաքրել և ախտահանել ցանկացած մակերես կամ անկողնային պարագաներ: Կենցաղային ախտահանիչ միջոցների մեծ մասը (օրինակ՝ ախտազերծող նյութերը) արդյունավետ են կապիկի ծաղիկի դեմ:
- Կապ հաստատել ձեր անասնաբույժի հետ՝ քննարկելու ձեր ընտանի կենդանու ախտանիշները, եթե կարծում եք, որ ձեր կենդանին հիվանդ է և բուժօգնության կարիք ունի:

ՊԵՏՔ ՉԷ՝

- Ձեր ընտանի կենդանուն **մի՛ տարեք** անասնաբուժական հիվանդանոց առանց նախապես զանգահարելու և քննարկելու կապիկի ծաղիկի կասկածը:
- Ձեր ընտանի կենդանուն **մի՛ թողեք** կենդանիների ապաստարանում: Բաց **մի՛ թողեք** ձեր կենդանուն վայրի բնության մեջ: Եթե նա վարակված է, կարող է փոխանցել հիվանդությունը մյուս կենդանիներին և մարդկանց: Շատ կարևոր է այս հիվանդությունը զսպել:

Լրացուցիչ աղբյուրներ

Հիվանդությունների Վերահսկման և Կանխարգելման Կենտրոններ (CDC): Կապիկի Ծաղիկ. Ընդհանուր Տեղեկություններ <https://www.cdc.gov/poxvirus/monkeypox/index.html>

Սննդի Անվտանգության և Հանրային Առողջության Կենտրոն, Կապիկ Ծաղիկ. Հաճախ Տրվող Հարցեր <https://www.cfsph.iastate.edu/Factsheets/pdfs/monkeypox.pdf>